

ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Հաղթանակի և խաղաղության օրվա առթիվ

09.05.2019

Արմավիրի մարզի հարգելի քնակիչներ, սիրելի հայրենակիցներ, ի սրտե շնորհավորում եմ բոլորիս մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ:

Թերթելով պատմության էջերը՝ մեծ հպարտություն եմ ապրում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում հատկապես հայ զինվորների ու սպաների, զորավարների ու հերոսների ցուցաբերած քաջության, սիրանքի ու հայրենասիրության համար: Դաժան պայքարում նրանք բռունցքով և հաղթել են՝ պաշտպանելով ու փրկելով նաև Հայաստանն ու հայ ժողովրդին, նոր հնարավորություն ստեղծելով մեր երկրի զարգացման և առաջընթացի համար:

Այդ փառահեղ հաղթանակը հայ ժողովրդի կյանքում նորովի է իմաստավորվել 1992 թվականի մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրմամբ՝ դառնալով արցախահայության անվտանգության կարևորագույն երաշխիքներից մեկը և նախադրյալներ ստեղծելով Արցախյան ազատագրական պատերազմը հաղթական ավարտով պսակելու համար:

Այսօր հպարտությամբ փաստում եմք, որ կրկնակի դարձած այս տոնը խորհրդանշում է մեր ժողովրդի վճռականությունն ու կամքը՝ պաշտպանելու իր արժանապատվությունը, անվտանգությունը, ազատ ապրելու և արարելու իրավունքը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ մեր սիրելի վետերաններին, ազատամարտիկներին և բոլորիս այս նվիրական տոների առթիվ և գլուխ խոնարհում հայրենիքի պաշտպանության համար ընկածների հիշատակի առջև: Թող մեր երկրում և ամենուր հավերժի խաղաղությունը:

*Լավագույն ցանկություններով՝
Համբարձում Մաթևոսյան*